2023թ. դիմորդների բուհերի մասնագիտության և ընդունելության քննությունների հայտագրում

I. Ընդհանուր դրույթներ

1. Դիմորդը ընդունելության քննություններին մասնակցելու և ընտրած մասնագիտությունը նշելու համար ընդունելության դիմում-հայտը էլեկտրոնային եղանակով ուղարկում է .

- ԱՀ ԳԹԿ «atc.nk.am@mail.ru» էլեկտրոնային փոստին, եթե ցանկանում է ընդունվել Արցախի Հանրապետության որևէ բուհ, կամ Հայաստանի Հանրապետության բուհ՝ Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերով, և ընտրած մասնագիտության ընդունելության մրցույթային քննությունները միայն միասնական են.
- ՀՀ ԳԹԿ կայքին, եթե ցանկանում է ընդունվել Հայաստանի Հանրապետության բուհ Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերով և ընտրած մասնագիտության ընդունելության քննությունները ներբուհական են, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության որևէ բուհ ոչ նպատակային տեղերով:

II. Արցախի Հանրապետության ԳԹԿ ուղարկվող դիմում-հայտի լրացման կարգը

2. Դիմորդը

1) լրացնում է իր անձնական տվյալները (ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի) անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հեռախոսի համարները՝ յուրաքանչյուր վանդակում գրելով մեկ տառ կամ թվանշան,
2) համապատասխան վանդակում կպցնում է 3x4սմ լուսանկար,
3) նշում է սեռը, քաղաքացիությունը՝ համապատասխան վանդակում դնելով X նշանը,
4) համապատասխան վանդակներում գրում է ընդունելության քննությունների համար վճարած գումարը,
5) լրացնում է ուսհաստատության անվանումը, գտնվելու վայրը,
6) լրացնում է իր էլեկտրոնային հասցեն,
7) «Ցանկանում եմ մասնակցել հետևյալ կրթական ծրագրի մրցույթին» սանդղակը լրացնում է հետևյալ կերպ.

ա) «մասնագիտության» սյունակում նշում է միայն մեկ մասնագիտություն (կրթական ծրագիր) Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված «բուհերի առկա ուսուցման մասնագիտությունների և ընդունելության քննությունների» ցանկից՝

- եթե տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) ընդունելության քննությունները միայն միասնական են, ապա դիմորդը կարող է նշել նույն մասնագիտության (կրթական ծրագրի) մեկ կամ մինչև երեք բուհեր՝ մինչև երկու անվճար և մինչև երեք վճարովի ուսուցման համակարգերի,
- եթե տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) ընդունելության քննությունները ներբուհական են, ապա դիմորդը նշում է միայն մեկ բուհի անվճար և վճարովի ուսուցման համակարգի,

բ) «Բուհ» սյունակում նշում է բուհի կոդը:

Բուհի անվանումը	*կոդը*
ԱրՊՀ	Ա1
Շուշիի տեխնոլոգիական համալսարան	Ա2
«Գրիգոր Նարեկացի» համալսարան	Ա3
«Մեսրոպ Մաշտոց» համալսարան	Ա4

Հայաստանի Հանրապետության բուհերի կոդերը նշված են «Հայաստանի Հանրապետության բուհերի մասնագիտությունների և ընդունելության քննությունների» ցանկում (բուհերի անվանումներից առաջ):

գ)«Կրթական ծրագրի» սյունակում նշվում է «Բուհերի մասնագիտությունների և ընդունելության քննությունների» ցանկի մասնագիտության կրթական ծրագիրը՝ իննանիշ թիվը՝ յուրաքանչյուր վանդակում գրելով մեկ թվանշան:

8) «Հանձնում եմ հետևյալ քննությունները» սյունակում նշում է ընտրած մասնագիտության համար սահմանված ընդունելության մրցութային քննությունները, որոնք նախատեսում է հանձնել: «Բուհերի մասնագիտությունների և ընդունելության քննությունների» ցանկի «Ընդունելության քննություններ» բաժնի սյունակում միասնական քննությունների առարկաները «կամ» բառով տարանջատված լինելու դեպքում դիմորդին թույլատրվում է ընտրել նշված քննություններից մեկը:

9) «Հանձնել եմ հետևյալ միասնական քննությունը» սյունակում նշվում են դիմորդի կողմից նախկինում հանձնած միասնական քննությունների դրական գնահատականները, եթե դրանք համապատասխանում են նշված մասնագիտության ընդունելության մրցութային քննություններին և միասնական քննությունների արդյունքների վկայագիրը ուժի մեջ է:

Դիմորդը ԱՀ ԳԹԿ-ից ստանում է անձնական համարը, այնուհետև գրանցվում է «dimord.am» կայքում: Հետդարձ կապ հաստատելուց հետո դիմորդը նույն կայքէջում նշում է միայն ընդունելության միասնական քննությունների առարկաներ»:

III. Հայաստանի Հանրապետության ԳԹԿ ուղարկվող դիմում-հայտի լրացման կարգը

3.Դիմորդը

1) դիմում է Արցախի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոն: Գնահատման և թեստավորման կենտրոնում ստուգում են դիմորդի կողմից ընդունելության մրցույթային քննությունների համար փոխանցած վճարի անդորրագրի առկայությունը, գրանցում անձնական տվյալները, հայտագրում ընտրած մասնագիտության ընդունելության քննությունները և դիմորդին տրամադրում ԳԹԿ անձնական համար:

2) Հայաստանի Հանրապետության ԳԹԿ ուղարկվող դիմում-հայտում հայտագրվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատված «Բուհերի մասնագիտությունների և ընդունելության քննությունների» ցանկի միայն մեկ մասնագիտության (կրթական ծրագրի) մեկ բուհի անվճար և վճարովի ուսուցման համար: Հայաստանի Հանրապետության բուհերի Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմում-հայտի հետ ուղարկում է պետական մարմնի կողմից համապատասխան մասնագետ ունենալու պահանջի վերաբերյալ տրված տեղեկանքի էլեկտրոնային տարբերակը:

3) ընդունելության դիմում-հայտում նշում է տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված ընդունելության մրցույթային քննությունները: «Բուհերի մասնագիտությունների և ընդունելության քննությունների» ցանկի «Ընդունելության քննություններ» բաժնի սյունակում միասնական քննությունների առարկաները «կամ» բառով տարանջատված լինելու դեպքում՝ դիմորդին թույլատրվում է ընտրել նշված ընդունելության քննություններից մեկը:

IV. Ընդունելության քննությունների վճարման կարգը

4. Ընդունելության մրցույթային յուրաքանչյուր քննության համար դիմորդը փոխանցում է 1500 դրամ
   - միասնական քննությունների համար՝ Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության գնահատման և թեստավորման կենտրոնի 915013000145 հաշվեհամարին,
   - ներբուհական քննությունների համար՝ համապատասխան բուհի հաշվեհամարին:
   Անդորրագրերի էլեկտրոնային տարբերակը ուղարկվում է դիմում-հայտի հետ:
5. Ընդունելության քննությունների վճարից ազատվում են
   - Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ծնողները, ամուսինը (կինը), մինչև 27 տարեկան զավակները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները.
   - 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները.
   - առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:
   Նշված արտոնություններից օգտվող դիմորդները համապատասխան տեղեկանքի էլեկտրոնային տարբերակը ուղարկում են ընդունելության դիմում-հայտի հետ:

V. Ընդունելության քննությունների դիմում-հայտերի ընդունման և փոփոխման ժամկետները

6. Դիմում-հայտերը ընդունվում են ս. թ. ապրիլի 15-ից մինչև մայիսի 8-ը՝ ժամը 18:00:
7. Դիմորդը կարող է ընդունելության դիմում-հայտում փոփոխություններ կատարել կամ հրաժարվել մինչև տվյալ տարվա մայիսի 8-ը՝ ժամը 17:00-ն:
   Ընդունման ժամկետի ավարտից հետո ընդունելության դիմում-հայտը փոփոխման ենթակա չէ:
8. Դիմորդին չի թույլատրվում ներկայացնել ընդունելության մեկից ավելի դիմում-հայտ:
   Բազայում նույն դիմորդի՝ ընդունելության մեկից ավելի դիմում-հայտերի առկայության դեպքում տվյալ դիմորդը զրկվում է ընդունելության քննություններին և մրցույթին մասնակցելու իրավունքից:

VI. Բուհերի ընդունելության մրցույթի անցկացումը

9. Բուհերի՝ ըստ անվճար և վճարովի ուսուցման համակարգերի ընդունելության մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ հիմնական և թափուր տեղերի (լրացուցիչ):
Միասնական քննությունների արդյունքներով մրցույթն անցկացվում է գնահատման և թեստավորման կենտրոնում, իսկ ներբուհական քննությունների արդյունքներով՝ համապատասխան բուհում:
10. Դիմորդն անվճար և վճարովի ուսուցմամբ հայտագրած համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) մրցույթին մասնակցում է մրցույթային ընդունելության քննություններից ստացած դրական միավորների գումարով՝ հարյուրերորդական մասի պահպանմամբ: Բուհ ընդունված դիմորդների ցուցակը կազմվում է մասնագիտության համար սահմանված ընդունելության մրցույթային քննություններից ստացած միավորների գումարի նվազման կարգով: Անհրաժեշտ է նաև՝ ցանկի տվյալ մասնագիտության համար նշված մեկ աստղանիշով (*) ընդունելության ոչ մրցույթային քննությունից դիմորդը ունենա դրական միավոր: Ընդունելության ոչ մրցույթային քննության արդյունքն է՝ դիմորդի՝ տվյալ առարկայից

պետական ավարտական քննության գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:
11. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Բոլոր միավորները գնահատվում են հարյուրերորդական մասի պահպանմամբ՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան: Միասնական քննությունների արդյունքում դրական են համարվում 7,5 և բարձր միավորները: Ներբուհական քննությունների համար դրական են համարվում ութ և բարձր միավորները:
12. Մասնագիտության մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտի առաջին տողով ընտրված բուհի՝ անվճար և վճարովի ուսուցման հայտի գերակայությամբ:
13. Հայտագրված առաջին բուհի մրցույթով չանցած դիմորդների համար մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված բուհերի հերթականությանը համապատասխան,եթե նշված բուհի տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար առկա են թափուր տեղեր:
14. Ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտության (կրթական ծրագրի) որևէ բուհ (ըստ հայտագրման հերթականության) ընդունված դիմորդը չի մասնակցում հայտագրված հաջորդ բուհերի մրցույթին: Իսկ չընդունված դիմորդը ըստ հերթականության մասնակցում է հաջորդ բուհերի մրցույթին:
15. Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Արցախի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար տեղերի մրցույթին մասնակցում են Արցախի Հանրապետությունում գրանցում ունեցող և ԱՀ ուսումնական հաստատություններ ավարտած դիմորդները, ովքեր նախօրոք, ըստ հաստատված կարգի, հայտագրված են եղել համապատասխան մասնագիտությանը (կրթական ծրագրին) և հավաքել են տվյալ բուհի համար սահմանված ընդունելության քննությունների առավելագույն դրական միավորների հանրագումարի առնվազն 75%-ը:
16.Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից բուհերի ընդունելության մրցույթի հիմնական փուլի արդյունքները հաստատելուց հետո, բուհերում, մասնագիտությունների թափուր տեղերի առկայության դեպքում, ընդունելության քննություններից դրական միավորներ ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները կարող են մասնակցել թափուր տեղերի մրցույթին:Թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները նոր դիմում-հայտը ԳԹԿ են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով հուլիսի 19-ից մինչև հուլիսի 26-ը ժամը 18:00:

Դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի մինչև երկու անվճար և մինչև վեց վճարովի մասնագիտությունների թափուր տեղերի մրցույթին, եթե ընտրած մասնագիտության համար պահանջվող ընդունելության մրցույթային քննություններից ունի դրական միավորներ: